

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՆԱՆՑ
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ.
2025-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ.

2025-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

Հեղադրությունն իրականացվել է Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի կողմից Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի աջակցությամբ Միացյալ Թագավորության (ՄԹ) միջազգային զարգացման շրջանակում՝ ՄԹ կառավարության կողմից ֆինանսավորվող «Արձագանքելով Հայաստանում քայքայիչ կապիտալի սպառնալիքներին. Փուլ III» ծրագրով:

Հեղադրության արդյունքներում արտահայտված կարծիքները պարկանում են հեղինակներին և հնարավոր է՝ ոչ միշտ համընկնեն ՄԹ կառավարության և Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի պաշտոնական քաղաքականությանը կամ պաշտոնական դիրքորոշմանը:

Վերլուծության համար հիմք է հանդիսացել Հայաստանում գործող 17 առևտրային բանկերի պաշտոնական համացանցային կայքերում հրապարակված տեղեկատվությունը, որը հավաքագրվել է **2026 թվականի ապրիլ և հուլիս** ամիսներին:

Խորհրդի քանակական կազմը

Հայաստանի բանկերի խորհուրդների քանակական կազմը հիմնականում կարգավորվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով: Համաձայն օրենքի՝ բանկի խորհուրդը պետք է կազմված լինի առնվազն 5 և առավելագույնը 15 անդամից:


Օրենսդրությամբ սահմանված այս միջակայքը բանկերին հնարավորություն է տալիս խորհուրդների կազմը ձևավորելիս հաշվի առնել իրենց չափը, գործունեության բարդությունը, զարգացման հեռանկարները, ռիսկերի բնույթը և կառավարման առանձնահատկությունները:

Գործնականում Հայաստանի առևտրային բանկերի խորհուրդների քանակական կազմը հիմնականում գտնվում է 5–6 անդամի միջակայքում, ինչը վկայում է, որ բանկերը նախընտրում են ձևավորել համեմատաբար փոքր կազմով խորհուրդներ (գծապատկեր 1):

2025–2026 թվականների համեմատությամբ՝ բանկերի խորհուրդների քանակական կազմում արձանագրվել է ընդլայնման որոշակի միտում: 2025 թվականի 95 անդամի համեմատ 2026 թվականին բանկերի խորհուրդների անդամների ընդհանուր թիվը կազմել է 101, ինչը վկայում է մոտավորապես 6% աճի մասին:

Աճը հիմնականում պայմանավորված է եղել յոթ անդամ ունեցող խորհուրդների թվի ավելացմամբ, որը տեղի է ունեցել հինգ անդամ ունեցող խորհուրդների թվի նվազման հաշվին:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1. Բանկերի խորհուրդների քանակական կազմը



Կանանց ներկայացվածությունը խորհուրդներում

Կանանց ներկայացվածությունը բանկերի խորհուրդներում կորպորատիվ կառավարման կարևոր ցուցանիշներից է, քանի որ խորհրդի բազմազանությունը համարվում է կառավարման որակի, բազմակարծության մշակույթի ձևավորման և առավել հավասարակշռված ու հիմնավորված որոշումների կայացման կարևոր նախապայման:

Բանկերի խորհուրդներում կանանց ներկայացվածությունը Հայաստանի օրենսդրությամբ պարտադիր պահանջ չէ: Միաժամանակ, ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագիրքը (Կանոնագիրք), որը կիրառելի է ցուցակված ընկերության կարգավիճակ ունեցող բանկերի համար, սահմանում է խորհրդի բազմազանության սկզբունքը: Մասնավորապես, Կանոնագրքի II.2 սկզբունքի համաձայն՝ կազմակերպությունը պետք է ապահովի խորհրդի կազմի բազմազանությունը՝ խորհրդի գործունեության արդյունավետությունը և որոշումների օբյեկտիվությունն ու հավասարակշռվածությունը բարձրացնելու նպատակով: Սկզբունքի բացատրություններում որպես ուղենիշ սահմանվում է, որ խորհրդում յուրաքանչյուր սեռի ներկայացվածությունը չպետք է պակաս լինի 30 տոկոսից:


Հաշվի առնելով Հայաստանի բանկերի խորհուրդներում կանանց դեռևս սահմանափակ ներկայացվածությունը՝ այս թիրախը կարևոր դեր ունի խորհուրդներում սեռային հավասարակշռության աստիճանական բարելավումն ապահովելու հարցում: Միաժամանակ, հարկ է նշել, որ Կանոնագիրքը գործում է «Հետևի՛ր կամ բացատրի՛ր» սկզբունքի հիման վրա: Սա նշանակում է, որ 30 տոկոսի թիրախին չհամապատասխանող բանկերը պարտավոր են հրապարակայնորեն ներկայացնել հիմնավորված և սպառիչ բացատրություն չհետևելու պատճառների, այդ որոշումը պայմանավորող առանձնահատուկ հանգամանքների կամ կիրառվող այլընտրանքային մոտեցումների վերաբերյալ:

2025–2026 թվականներին բանկերի խորհուրդներում կանանց ներկայացվածության ուսումնասիրությունը վկայում է դրական միտման մասին: Թեև կանայք բանկերի խորհուրդներում շարունակում են մնալ փոքրամասնություն, մեկ տարվա ընթացքում նրանց մասնաբաժինը խորհուրդներում աճել է 2 տոկոսային կետով՝ 2025 թվականի 13%-ից հասնելով 15%-ի 2026 թվականին: Բացարձակ թվերով, եթե 2025 թվականին խորհրդի 95 անդամներից 12-ն էին կին, ապա 2026 թվականին 101 անդամից՝ 15-ը (զծապատկեր 2):

Կանանց ներկայացվածության աճը պայմանավորող գործոններից է խորհրդի անդամների ընդհանուր թվի սեռային պատկանելիության հայտանիշով համամասնական ավելացումը: Ինչպես նշվել է վերևում, 2026 թվականին խորհուրդների կազմը համալրվել է 6 նոր անդամով, որոնցից 3-ը կին են, իսկ 3-ը՝ տղամարդ:


Չնայած արձանագրված դրական առաջընթացին, կանանց 15% ներկայացվածությունը դեռևս զգալիորեն ցածր է Կանոնագրքով որպես ուղենիշ սահմանված 30% շեմից: Սա վկայում է բարելավման զգալի ներուժի մասին:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2. Կանանց ներկայացվածությունը բանկերի խորհուրդներում




Հարկ է նշել, որ կանանց ներկայացվածությունը բանկերի խորհուրդներում հավասարաչափ չէ (գծապատկեր 3): 2026 թվականի տվյալներով Հայաստանի բանկերի գրեթե կեսի (47%) խորհուրդներում կին անդամներ ընդհանրապես չկան: Միաժամանակ, կարելի է փաստել, որ 2026 թվականին խորհրդի կին անդամ չունեցող և խորհրդի կին անդամ ունեցող բանկերի հարաբերակցությունը 2025 թվականի «հայելապատկերն» է. եթե այդ հարաբերակցությունը 2025 թվականին կազմել է 53/47, ապա՝ 2026 թվականին՝ 47/53՝ շնորհիվ այն բանկերի, որոնց խորհուրդներում ընտրվել են կին անդամներ:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 3. Խորհրդում կին անդամ չունեցող և կին անդամ ունեցող բանկերի հարաբերակցությունը



Ինչ վերաբերում է բանկերի խորհուրդներում կանանց թվին, ապա դիտարկվող ժամանակահատվածում բանկերի 29%-ի խորհրդում ներկայացված է եղել ընդամենը մեկ, 12%-ում՝ երկու կին: Ուշագրավ է այն, որ խորհրդի 3 կին անդամ ունեցող բանկերի թիվը մեկ տարվա կտրվածքով կրկնապատկվել է: Հաշվի առնելով այդ բանկերի խորհուրդների քանակական կազմը՝ դրանք հասել են սեռերի հավասար 50/50 ներկայացվածության (գծապատկեր 4):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 4. Խորհուրդներում ներկայացված կանանց թիվը



Բացարձակ թվերով 2026 թվականին Հայաստանի բանկերից 8-ը չի ունեցել խորհրդի կին անդամ, 5-ում գործել է ընդամենը խորհրդի 1 կին անդամ, 2-ական բանկերում՝ համապատասխանաբար 2 և 3:

Շարունակելի...